ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **<u>ԱՆՈՒՆԸ ԱԶԳԱՆՈՒՆԸ</u>**

Սուրեն Պապիկյան

2. **<u>ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ</u>**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար

3. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ</u>**

Վիեննա, Ավստրիայի Հանրապետություն, 2019թ. սեպտեմբերի 15-ից 18-ը

4. **<u>ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ</u>**

Ատոմային էներգիայի միջազգային գործակալություն /ԱԷՄԳ/:

5. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ</u>**

Մասնակցելու ԱԷՄԳ 63-րդ գլխավոր համաժողովին:

6. **<u>ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ</u>**

Քննարկվել են ԱԷՄԳ 63-րդ համաժողովի օրակարգով նախատեսված հարցերն, այդ թվում միջուկային անվտանգության, տեխնիկական համագործակցության ընդլայնման, միջուկային և ռադիացիոն պաշտպանության վերաբերյալ զեկույցները, ինչպես նաև գործակալության 2018թ. գործունեության հաշվետվության, տեխնիկական համագործակցության հիմնադրամի, 2021թ. բյուջեի, արտաքին աուդիտորի, վերաբերյալ ֆինանսական և կազմակերպական այլ հարցեր: Պատվիրակությունների ղեկավարները հանդես են եկել ելույթներով, հայտարարություններով:

7. **<u>ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ</u>**

Համաժողովի շրջանակներում հանդիպումներ են կայացել ԱԷՄԳ գլխավոր տնօրենի պաշտոնակատար Կորնել Ֆերուտայի, ԱԷՄԳ գլխավոր տնօրենի տեղակալ Դաժու Յանգի, Միջուկային զենքի փորձարկման համապարփակ արգելման պայմանագրի կազմակերպության նախապատրաստական հանձնաժողովի գործադիր քարտուղար Լասինա Զերբոյի հետ, ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության գլխավոր տնօրեն Լի Յոնգի:

Կորնել Ֆերուտայի հետ քննարկվել են ԱԷՄԳ-ի՝ Հայաստանի հետ համագործակցության հարցեր: Ֆերուտան նշել է, որ համագործակցությունը կշարունակվի և ԱԷՄԳ-ն կներդնի իր բոլոր ջանքերն ու գործիքակազմը կազմակերպության անդամ, ատոմային էլեկտրակայաններ շահագործող երկրների, այդ թվում Հայաստանի կողմից դրանց անվտանգ շահագործման և անվտանգության

բարձրացման նպատակով: Մասնավորապես պատրաստակամություն է հայտնել փորձագիտական և տեխնիկական համապարփակ աջակցություն ցուցաբերել Հայաստանի միջուկային էներգետիկայի բնագավառին:

Դաժու Յանգի հետ քննարկվել են ԱԷՄԳ-ի կողմից Հայաստանին տրվող տեխնիկական աջակցության ծրագրերի ընթացքը: Ներկայացվել է Հայկական ԱԷԿ-ի գործող էներգաբլոկի նախագծային շահագործման ժամկետի երկարացման ծրագրի ընթացքը: Մեր կողմից կարևորել է ատոմային էներգիայի միջազգային գործակալության կողմից իրականցվող տարբեր միջոցառումների, վերապատրաստման դասընթացներին հայ մասնագետների մասնակցությունը: Յանգը նշել է ԱԷՄԳ -ի հետ 2018-2023 թթ. տեխնիկական համագործակցության համաձայնագրի շրջանակներում տեխնիկական աջակցությունը շարունակելու պատրաստակամությունը՝ Հայաստանի կարիքներին համապատասխան:

Լասինա Զերբոյի հետ հանդիպմանը նշվել է, որ Հայաստանը պատրաստ է առավելագույն ջանքեր գործադրել Միջուկային զենքի փորձարկման համապարփակ արգելման պայմանագրի կազմակերպության նախապատրաստական հանձնաժողովի և դրա հովանու տակ գործող աշխատանքային խմբերի հետ փոխգործակցությունն ընդլայնելու և խորացնելու ուղղությամբ: Զեբրոն գոհունակությամբ ընդգծել է, որ Հայաստանն ակտիվորեն մասնակցում է Միջուկային զենքի փորձարկման համապարփակ արգելման պայմանագրի ներքո իրականացվող տենիկական և քաղաքական ծրագրերին:

Լի Յոնգի հետ քննարկվել են ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության հետ համագործակցության հարցեր: Մեր կարևորվել է կազմակերպության ներգրավածության ընդլայնումը Հայաստանի համաչափ զարգացման ծրագրերում: Լի Յոնգը պատրաստակամություն է հայտնել,որ ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպությունը ակտիվ մասնակցություն կունենա միջնաժամկետ և երկարաժամկետ զարգացման ծրագրերում: Մասնավորպես տարբեր համայնքային ծրագրերում կարողությունների զարգացման, գյուղատնտեսական, ենթակառուցվածքային այլ ուղղություններով: Պայմանավորվածություն է ձեռք բերվել առավել մանրամասն քննարկել նախանշված ծրագրերը, դրանք գործնական փուլ տեղափոխելու նպատակով:

ԱԷՄԳ 63-րդ համաժողովի շրջանակներում կարճատև զրույց է կայացել ՌԴ Ռոսատոմ պետական կորպորացիայի գլխավոր տնօրեն Ալեքսեյ Լիխաչովի հետ: Պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ ս.թ. սեպտեմբերի վերջին Ա. Լիխաչովը կայցելի Հայաստան տեղում քննարկելու ՀԱԷԿ նախգծային շահագործման ժամկետի երկարացման աշխատանքների ընթացքը և նախանշել Ռոսատոմ կորպորացիայի հետ առաջիկա տարիների համագործակցության ուղղությունները:
ԱԷՄԳ 63-րդ գլխավոր համաժողովի շրջանակներում բացվել է Հայաստանի տաղավարը, որտեղ ներկայացվել Հայատոմ գիտահետազոտական ինստիտուտի ծրագրային մշակումները ատոմակայանների անվտանգության բարձրացման

վերաբերյալ: Տաղավար է այցելել նաև ԱԷՄԳ գլխավոր տնօրենի պաշտոնակատար Կորնել Ֆերուտան:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Պայմանավորվածություններ են ձեռք բերվել ԱԷՄԳ-ի կողմից իրականցվող տեխնիկական աջակցության ծրագրերին Հայաստան ներգրավածությունն ավելացնելու նպատակով: ԱԷՄԳ համապատասխան պաշտոնյաների հրավիրել ենք Հայաստան:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Շարունակել և ակտիվացնել համագործակցությունը ԱԷՄԳ-ի հետ:

ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ